ք.Վանաձոր 29.08.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային լսումների

2025 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 11:10-ին Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում /4-րդ հարկ/ տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Բացման խոսքով հանդես եկավ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը.

«Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ որոշվել է.

1.«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2025 թվականի հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում:

2.Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր https://vanadzor.am/content/3589 ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3.Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2025 թվականի օգոստոսի 29-ը, ժամը 11:00 :

4.«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի պաշտոնակատարի ներկայացուցիչ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանին:

Լ.Դավթյանը տեղեկացրեց, որ գրավոր առաջարկությունների վերաբերյալ նախապես հայտարարված վերջնաժամկետի ավարտին՝ 2025 թվականի օգոստոսի 28 – ը, ժամը՝ 16:00-ն քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առաջարկություններ չեն ներկայացվել:

Այնուհետև ներկայացրեց սուբվենցիոն 11 ծրագրերը: Դրանք էին՝

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր ճանապարհի հիմնանորոգում:

Ծրագրով նախատեսվում է Դարպաս բնակավայր մուտք գործող գլխավոր ճանապարհի լայնացում՝ սարի փլման աշխատանքներով, ճանապարհը այդքան էլ երկար չէ, սակայն ինժեներական աշխատանքներ պիտի կատարվեն դրանով է պայմանավորված նշված ծրագրի բարձր արժեքը:

2. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում:

Նախատեսվում է իրականացնել թիվ 3, 8, 9, 10, 11, 13 և 14-րդ փողոցների հիմնանորոգում:

3. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք բակերի հիմնանորոգում, խաղահրապարակների կառուցում:

Նշվեց, որ նախորդ տարի նույնպես հիմնանորոգվել են բակեր և խաղահրապարակներ. աշխատանքները կշարունակվեն հաջորդիվ:

4. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգում:

Կարևորագույն նշանակություն ունեցող փողոց է անհրաժեշտությունը ակնհայտ էր:

5. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում:

Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել թվով 9 փողոց:

6. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի թվով 3 սպորտդպրոցների հիմնանորոգում:

Այս ծրագիրը վերաբերում է «Վանաձորի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին, «Գուգարքի Հենրիկ Սաքանյանի անվան մարզադպրոց» բյուջետային հիմնարկին և «Վանաձորի «Տարոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ին:

Ծրագրի ֆինանսավորման համար դիմել ենք նաև միջազգային դոնորների:

7. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում:

Նախատեսվում է 1,8 կմ երկարությամբ փողոցի ասֆալտապատում՝ մայթերով և գազոններով:

8. ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր համայնքի, Շահումյան բնակավայրում մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:

Կառուցվելու է մանկապարտեզի նոր շենք՝ թվով 50 երեխայի համար՝ երկու խմբով:

9. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգում:

10. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացի փողոցի հիմնանորոգում:

11. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգում:

Հարց ու պատասխան

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Նորիկ Ադամյան – Քիմիագործների 2-րդ փողոցը, ինչպես նաև Ֆիդայիների փողոցը հիմանանորագման կարիք ունեն, արդյոք նախատեսվում է ներառել նշված փողոցները սուբվենցիոն ծրագրի մեջ, թե՝ ոչ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյան – Այս սուբվենցիոն ծրագրով նախատեսված չէ նշված փողոցների հիմնանորոգում, բայց փոսային նորոգման աշխատանքներ կկատարվեն:

Առաջարկեց հաջորդ տարի համայնքային բյուջեով հիմնանորոգել երկրորդային փողոցները:

Գնումների բաժնի պետ Դավիթ Հակոբյան - Քանի որ Գ. Նժդեհ և Ավ.Իսահակյան փողոցները նեղ են և տեղադրված աղբամանները որոշ չափով խոչընդոտում են երթևեկությանը, առաջարկում եմ կիրառել համապատասխան միջոցներ, որպեսզի աղբամանները չտեղաշարժվեն:

«Մամիկոն Ասլանյան» դաշինքի ավագանու անդամ Սեյրան Ղամբարյանը հիշեցրեց ,որ Եվրոպական համալսարանի դիմացի հողը հոսում է և լցվում է գետը, անհրաժեշտություն կա հենապատի:

Ի պատասխան Լ Դավթյանը նշեց,որ այդ աշխատանքները պետք է իրականացվեն ոչ թե սյուբվենցիոն ծրագրերով,այլ ՝ համայնքային միջոցներով:

Ամփոփում

Քննարկումների արդյունքում մասնակիցները դրական գնահատեցին ծրագրային հայտերը, դրանք համարելով առաջնահերթություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 11:50-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հայկ Վիրաբյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար՝ Աստղիկ Ավետիքյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր, աշխատակիցներ, ավագանու անդամներ՝«ՀԱՍԿ» խմբակցության անդամ Արման Բերնեցյանը,Արաքսյա Սարգսյանը,«Մամիկոն Ասլանյան» դաշինք Սեյրան Ղամբարյանը,«Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության անդամ Լուսինե Թադևոսյանը:

Նախաձեռնող՝
Վանաձոր համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ Ա.Փելեշյան

Վանաձորի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ _____ Հ.Վիրաբյան

Նիստը վարող՝ _____ Լ.Դավթյան